ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Լիլիթ Ասլանյան

«-01-» 09 -2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

_________IIIա______________դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Անահիտ Գրիգորյան Հենրիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

***Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները***

***Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)***

***3ա*** *դասարանը բաղկացած է 26 աշակերտից,որից 11-ը աղջիկ, 15-ը՝ տղա: Դասարանում բոլորն էլ դպրոց են գալիս պատրաստված ,իրենց ունակություններին համապատասխան: Գալիս են ուրախ և ժպտացող աչքերով: Ունենք Արցախից բռնի տեղահանված երկու աշակերտ,որոնց շրջապատել ենք սիրով ու ջերմությամբ: Դասարանում ունենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1 աշակերտ,որին երեխաները սիրում և աջակցում են:*

***Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները***

***Հայեցի դաստիարակություն***

***Հոգևոր դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

*Աշակերտների մեջ զարգացնել քրիստոնեական դաստիարակությանը: Խոսել Աստծո պատվիրանների մասին:Սովորեցնել Տերունական աղոթքը: Ծանոթացնել եկեղեցիական տոներին, բացատրել դրանց նշանակությունը:*

**Գեղագիտական դաստիարակություն**- խնդիրները՝

---

Աշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: - Գեղագիտական դաստիարակության միջոցով օգնել աշակերտներին ճանաչել և գնահատել բնության գեղեցկությունը, սեր արթնացնել գեղեցիկի ու բարու նկատմամբ: Խոսել մաքուր ու գրական հայերենով: --------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

**Ռազմահայրենասիրական դաստիարակություն** խնդիրները՝

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:--------------------------------- Դաստիարակում ունենք ազգային խորհրդանիշներ: Ծանոթացնել խորհրդանիշների հետ: Խոսել Հայաստանի հերոսական անցյալի, անկոտրում կամքի մասին: Խոսել նորօրյա հերոսների սխրանքների մասին: ------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------

***Ֆիզիկական դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:*

*Ուշադրություն դարձնել աշակերտների առողջ ապրելակերպին, սանիտարահիգիենիկ վիճակին: Երեխաներին հորդորել շատ լինել մաքուր օդում: Հեռախոսներից և նորօրյա տեխնոլոգիաներից օգտվել միայն անհրաժեշտության դեպքերում:*

---

***Աշխատանքային դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:*

*Երեխաներին օգնել գնահատելու աշխատավոր մարդուն: Հորդորել միշտ ավարտին հասցնել սկսած գործը: Օգնել հասկանան աշխատանքի*

---

*կարևորությունը: Հասկանան,որ աշխատանքն է կերակրում մարդուն:*

***Բնապահպանական դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում*

*Ամենօրյա զրույցների և էքսկուրսիաների միջոցով սեր արթնացնել բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ:Խոսել ծառ ու ծաղկի կարևորության մասին:*

---

***Դպրոց-ընտանիք կապը*** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց -ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:*

*Կազմակերպել ծնողական ժողովներ:Միասնական ջանքերով օգնել երեխաներին մարդկային որակներ մշակելու:Ծնողների հետ ամենօրյա շփում*

*ապահովել նորօրյա տեխնոլոգիաների միջոցով:*

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | | 2-րդ կիսամյակ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | դասաժամը | Շաբաթվա օրը | դասաժամը |
| Հինգշաբթի | 6-րդ | | |

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ամսաթիվ | Կատարվել է |
|---|---|---|---|
| I | Կազմակերպչական հարցերի քննարկում:<br>Ծանոթացնել հիգիենայի կանոններին: | 6.09.23թ | |
| II | Զրույց<<Ազատ, անկախ Հայաստան>>թեմայով: | 13.09.23թ | |
| III | <<Ինչ դեր ունի ուսուցիչն իմ կյանքում>>թեմայով զրույց: | 20.09.23թ | |

| | | | |
|---|---|---|---|
| IV | Տեսանյութի դիտում<<Մեր հարազատ քաղաք>> թեմայով : | 27.09.23թ | |
| V | Զրույց<<Բերքառատ աշուն>> թեմայով: | 04.10.23թ | |
| VI | Մուլտֆիլմի դիտում<<Ով աշխատի ,նա կուտի>> թեմայով: | 11.10.23թ | |
| VII | <<Իմ իրավունքներն ու պարտավորությունները>> թեմայով պաստառի պատրաստում: | 18. 10.23թ | |
| VIII | Մեր թևավոր բարեկամները:Պատրաստել բներ ձմեռող թռչունների համար: | 1.11.23թ | |
| IX | Հրաժեշտ աշնանը: | 8.11 .23թ | |
| X | <<Հանդուրժողականությունը մեր կյանքում>>թեմայով զրույց | 15.11.23թ | |
| XI | Զրուցել բարեկիրթ վարվեցողության մասին: | 22.11.23թ | |
| XII | Ինչպես պաշտպանվել տարերային աղետներից | 29.11. 23թ | |
| XIII | <<Ինչքան սառն են ձեռքերդ ձմեռ >>թեմայով ցուցահանդես | 13.12.23թ | |
| XIV | Եղևնու խորհուրդը | 20.12.23թ | |
| XV | Դասասենյակի տոնական ձևավորումը: | 10.1.24թ | |
| XVI | Լույս ընծայել պատի թերթ<<Բանակը հայրենիքի սիրտն է>>թեմայով: | 17.1.24թ | |
| XVII | Փառք քեզ Հայոց բանակ: | 24.1.24թ | |
| XVIII | Պատրաստել անվտանգ երթևեկության անկյուն: | 31.1.24թ | |
| XIX | Դիտել հեքիաթ կենդանիների հավատարմության մասին և քննարկել: | 7.2.24թ | |
| XX | Գիրք նվիրելու տոնին ընդառաջ<<Գիրքը գիտելիքի աղբյուր է >>թեմայով: | 14.2.24թ | |
| XXI | Զրույց<<Մաքուր պահիր շրջապատդ>> թեմայով: | 21.2.24թ | |
| XXII | <<Ինչ սպորտաձև եմ սիրում >>թեմայով զրույց: | 28.2.24թ | |
| XXIII | Կանանց միջազգային տոնին ընդառաջ պատրաստել բացիկներ մայրիկների համար: | 6.3.24թ | |
| XXIV | Դռները բացեք գարուն է գալիս: | 13.3.24թ | |
| XXV | <<Ով է ամենալավ ընկերը>>թեմայով զրույց: | 20.3.24թ | |
| XXVI | Զրույց շրջապատում տիրող դրական և բացասական երևույթների մասին: | 27.3.24թ | |
| XXVII | Մայրության և գեղեցկության տոնին ընդառաջ փոքրիկ ցերեկույթ կազմակերպել: | 03.,04.24թ | |
| XXVIII | Սուրբ Զատիկ | 10.04.24թ | |
| XXIX | Իրավիճակների հաղթահարում: | 17.04.24թ | |
| XXX | Մեծ Եղեռն: | 24.04.24թ | |
| XXXI | Մայիսը հաղթանակների ամիս է: | 01.05.24թ | |

| | | | |
|---|---|---|---|
| XXXII | Ժամանակը ոսկի է,ինչպես խնայել ժամանակը: | 08.05.24թ | |
| XXXIII | Ես մեկ տարով էլ մեծացա: Ուսումնական տարվա ավարտ: | 15.05.24թ | |
| XXXIV | Ամառային հանձնարարություններ: | 22.05.24թ | |